Արմինե Չոբանյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

ԱՐԲԻՏՐԱԺԸ ԵՎ ՄԵԴԻԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը վերաբերում է քաղաքացիաիրավական վեճերի քննության այլընտրանքային եղանակներին: Աշխատանքում ամփոփ ներկայացվել է առևտրային արբիտրաժի և մեդիացիայի գործընթացներն իրենց համապատասխան ընթացակարգերով: Աշխատանքում ներկայացվել է նաև առևտրային արբիտրաժի և մեդիացիայի որոշումների պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու հանգամանքները:

Հիմնաբառեր. արբիտրաժային գործընթաց, կամավոր մեդիացիա, պարտադիր մեդիացիա, միջազգային արբիտրաժ, արբիտրաժային տրիբունալ, արբիտրաժային համաձայնություն:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության հիմնական միջոցը դատական եղանակն է, երբ ցանկացած շահագրգիռ անձ իր խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար դիմում է դատական մարմիններին, որոնք քննում և լուծում են քաղաքացիաիրավական վեճերը՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, բացի դատական ձևից, կարող է իրականացվել նաև այլընտրանքային (արտադատական) միջոցներով կամ եղանակներով, օրինակ՝ կողմերի համաձայնությամբ, առևտրային վեճերով՝ Հայաստանի Հանրապետության արբիտրաժային տրիբունալի կամ միջազգային պայմանագրերով՝ Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան կազմակերպությունների պայմանագրերով միջազգային առևտրային արբիտրաժին դիմելու միջոցով, ինչպես նաև՝ ներպետական ու գերատեսչական արբիտրաժներին դիմելու միջոցով և այլն:

Ի տարբերություն քաղաքացիական իրավունքների դատական և վարչական ձևերի՝ արբիտրաժային դատավարությունը և մեդիացիոն գործընթացները՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևեր, վեճի կարգավորման ևս մեկ հնարավորություն է, համաձայն որի կողմերն իրենց փոխհամաձայնությամբ վեճի լուծումը վստահում են առևտրային արբիտրաժին կամ մեդիացիա (հաշտարարություն) իրականացնող որևէ մարմնի՝ արբիտրաժային կամ մեդիացիայի վերաբերյալ գրավոր համաձայնություն կնքելուց հետո:

Հատկապես վերջին տարիներին իրավաբանական պրակտիկայում վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների հետ կապված խնդիրներին ավելի ու ավելի մեծ ուշադրություն է հատկացվում: Դա պայմանավորված է հիմնականում թե՛ միջազգային արբիտրաժի՝ որպես միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճեր լուծող մարմնի դերի ու հեղինակության աճով, և թե՛ մեդիացիայի՝ որպես միջազգային վեճերի լուծման լավագույն մեթոդի ընդլայնմամբ: Զարգացած իրավական համակարգ ունեցող երկրները, իրականացնելով արբիտրաժային կենտրոնում գործառվող վեճերի լուծման բոլոր դրական կողմերը, նպաստեցին իրենց երկրներում արբիտրաժային և մեդիացիոն (միջնորդական) մշակույթի զարգացմանը:

Վերջին ժամանակներում Հայաստանի Հանրապետությունում ևս արժևորվում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների օգտագործման (պրակտիկ կիրառման) նշանակությունը:

Որպես վեճեր լուծող արտադատական մեթոդ՝ ինչպես արբիտրաժը, այնպես և մեդիացիան, գոյություն են ունեցել պատմական զարգացման տարբեր փուլերում: Մասնավորապես, իբրև առևտրային վեճեր լուծող սուբյեկտ հանդես է եկել տվյալ ժամանակահատվածի համար հեղինակություն վայելող համապատասխան անհատը: Ավելին, մեդիացիոն գործողություններ իրականացնող հայտնի կերպար է Սողոմոն թագավորը:

Ժամանակակից իմաստով «մեդիացիա» նշանակում է չեզոք կողմի՝ մեդիատորի կամ միջնորդի (երրորդ անձի) մասնակցությամբ վեճի կարգավորում, կողմերի միջև փոխզիջման (հաշտության) ձեռքբերում, բանակցությունների վարում, կողմերին հաշտեցման մղելուն ուղղված գործունեություն, նաև՝ հաշտեցնողական մինի-գործընթացների իրականացում: «Մեդիացիա» եզրույթը, որ լատիներեն «madiation» բառից է ծագում, բառացի նշանակում է «միջնորդություն»: Իսկ արբիտրաժը «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի[1] համաձայն լուծում է առևտրային բնույթի վեճեր: Ընդ որում վերը նշված օրենքի հիմքն է հանդիսացել «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» մոդելային օրենքը[2]:

Մեդիացիայի վերաբերյալ համաձայնությունը քաղաքացիաիրավական, աշխատանքային կամ ամուսնաընտանեկան որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր վեճերը մեդիացիայի միջոցով լուծելու:

Ինչպես արբիտրի, այնպես էլ մեդիատորի լիազորությունները (մինչև համապատասխան ակտ կայացնելը) արբիտրաժային կամ մեդիացիոն գործընթացի ցանկացած փուլում կողմերից մեկի պահանջով կարող է դադարեցվել[3]:

Մյուս կողմից, երբ մեդիատորը, լսելով կողմերին, գտնում է, որ վեճի խաղաղ կարգավորում ձեռք բերելն անհնար է դարձել, ապա այս դեպքում նույնպես

[1] «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2006 թվականի, դեկտեմբերի 25-ին, ՀՕ-55-Ն, նույն օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ընդունվել է 19.06.2015թ.): 12.11.2016թ. ՀՕ-193: Նշված օրենքում փոփոխություն կատարելու մասին, ընդունվել է 27.10.2016թ.:

[2] Միջազգային առևտրային արբիտրաժի մասին մոդելային օրենքն ընդունվել է 1985 թվականին. լրամշակված տարբերակը 2006 թվականի փոփոխություններն են:

[3] Անշուշտ դա կողմերից յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքն է, ինչն, իհարկե, պետք է պատճառաբանված լինի գրավոր տեսքով: Մյուս կողմից մինչև արբիտրաժի կամ մեդիացիայի վերաբերյալ որոշում կայացնելը կողմերի իրավունքը չի սահմանափակվում հետագայում դատարան դիմելուն:

դադարեցվում է համապատասխան գործընթացը, և կողմերը ցանկության դեպքում կարող են դիմել դատարան: Նույնը կարող ենք ասել արբիտրաժային վարույթի ընթացքում: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեդիացիա իրականացնելու ընթացքում կողմերը չեն կարող միևնույն ժամանակ դիմել արբիտրաժային տրիբունալին կամ դատարանին, որոնց առնչությամբ առկա է մեդիացիայի վերաբերյալ համաձայնություն և հակառակը:

Մեծ Բրիտանիայի արբիտրաժի զարգացման պատմությունն ուսումնասիրելիս կարևորվում է դատարանի կողմից իրականացվող հետևյալ երկու գործառույթները.

1. ճանաչել և երաշխավորել արբիտրաժային համաձայնության կատարումը,
2. վերահսկել արբիտրաժային դատավարությունը:

Վերը նշվածով էլ պայմանավորված էր արբիտրաժային դատավարության ողջ ընթացքը:

Պետք է ասել, որ դատարանի մյուս գործառույթը՝ արբիտրաժային վճռի իրավական բովանդակության ստուգումը, մեծապես պայմանավորված էր անգլիական արբիտրաժային իրավունքում ընդունված գործի հարուցման “spacial case” կարգով: Չնայած 1979 թվականից այս ինստիտուտն Անգլիայում վերացվեց և փոխարինվեց արբիտրաժային վճռի դատական վիճարկման ինստիտուտով[4]:

Փաստորեն, որոշ երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված են արբիտրաժային վճիռների վիճարկման, հետևաբար և ճանաչման ու կատարման ժամկետային սահմանափակումներ, իսկ որոշ երկրներում էլ դրանք բացակայում են[5]:

Այսպիսով, եթե արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից ստանալ վեճերի արդարացի լուծում որպես պետական դատարաններին այլընտրանք, ապա մյուս կողմից ծագում են վիճելի և անհավասար իրավիճակներ, որոնց կողմերը փաստորեն բախվում են գործնականում:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությունների վրա: Մինչդեռ արբիտրաժային մշակույթի խթանումը պահանջում է նաև այլ իրավահարաբերություններից բխող վեճերը արբիտրաժային ընթացակարգերով լուծման հանձնելու օրենսդրական կարգավորումների հստակեցում: Խոսքը մասնավորապես վերաբերում է ընտանեկան, աշխատանքային, սպառողական կարիքների համար կնքված քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վեճերին: Հատկապես արբիտրաժային համաձայնություն կնքելիս կողմերին անհրաժեշտ է ներկայացնել արբիտրաժի

[4] Վերջինիս իրականացման կարգը սահմանված է թե՛ անգլիական ներպետական իրավունքով, և թե՛ միջազգային պայմանագրերից ու համաձայնագրերից բխող պարտավորություններով, ինչպես օրինակ, 1958 թվականի Նյու Յորքի համաձայնագիրը:

[5] Գերմանիայում դատական և ոչ դատական, այդ թվում՝արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը սահմանափակված չեն (Prof. Dr. Richard Kreinder, Dr. Anna G.Tevini, Alexdander Dolgorukow, Arbitration Guide. Germany, Fabruary 2012): Մինչդեռ Կանադայում, արբիտրաժային վճիռների հետ կապված գործող Սահմանափակումների ակտի համաձայն, արբիտրաժային վճռի կատարմանն ուղղված ընթացակարգերը սկսելու կամ հարուցելու համար որևէ սահմանափակումներ չեն գործում (Ontario’s Limitations Act, 2002, Chapter 24, Article 16(1)):

էությունը, որտեղ չպետք է ներառվի որևէ պարտադրող կամ պարտավորեցնող գործողություն: Այսինքն՝ կողմերին պետք է հնարավորություն տրվի ազդելու պայմանագրի բովանդակության վրա:

Բացի այդ, արբիտրաժային ընթացակարգին վերաբերող բազմաթիվ կանոններ արբիտրաժային տրիբունալի վճիռը համարում են վերջնական[6] միևնույն ժամանակ սահմանելով այն սպառիչ հիմքերը, որոնց առկայության դեպքում հնարավոր է այն վիճարկել կամ չեղյալ ճանաչել: Անհրաժեշտ է հիշատակել, որ ՀՀ դատարանները արբիտրաժային տրիբունալի վճիռը չեն վերանայում ըստ էության, այլ իրավասու են ստուգելու դրա համապատասխանությունը սահմանված հիմքերին:

Ի՞նչ է ստացվում. թեև արբիտրաժային տրիբունալի վճիռը «թվացյալ» վերջնական է, սակայն միևնույն է այն կարող է բողոքարկվել և՛ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, և՛ քաղաքացիական ու վարչական գործերով ՀՀ վճռաբեկ պալատ: Այսպիսով՝ չենք կարող կանխատեսել արբիտրաժային վարույթի արագ, անկողմնակալ քննություն: Ուստի կարծում եմ՝ մինչև արբիտրաժային գործընթացն իրականացնելը պետք է սահմանել նախավեճային վարույթ, որտեղ

1. **անհրաժեշտ է ուսումնասիրել արբիտրաժային համաձայնության և դրան կից համաձայնության վավերականության հարցը, եթե առկա է,**
2. **անպայմանորեն պետք է ուշադրություն դարձնել արբիտրաժի վայրի ընտրությանը, և թե արբիտրաժային ընթացակարգը ո՞ր լեզվով է իրականացվելու,**
3. **եվ որ ամենակարևորն է, անհրաժեշտ է ընտրել այնպիսի արբիտրների, ովքեր կասկածի տեղիք չեն տա՝ կողմնակալ վերաբերմունք դրսևորելով, (որպեսզի հետագայում չառաջանա բացարկի խնդիր):**

Արբիտրաժն, անկասկած, կարող է տեսականորեն և գործնականում լինել վեճերի լուծման արդար և արդյունավետ միջոց, և այդ միջոցները պետք է խրախուսվեն:

Դրա արդյունավետությունն առավել կբարձրանա, եթե, վերը նշված դրույթներից բացի, արբիտրաժային համաձայնությունն ուժի մեջ մտնի երկու կողմերի միջև վեճի ծագումից հետո, հատկապես այն իրավիճակներում, երբ բանակցելու հնարավորությունը սկզբունքորեն անհավասար է:

Ինչպես արբիտրաժը, այնպես էլ մեդիացիան վեճերի քննության այլընտրանքային լուծման տեսակներ են, և, ի տարբերություն մեդիացիայի, արբիտրաժային վարույթի ավարտին արբիտրի կողմից ընդունվում է որոշում, որը վերջնական է և պարտադիր կատարման համար:

Մեդիացիայի պրակտիկայում վերջինիս վերաբերյալ համաձայնությունը քաղաքացիաիրավական, աշխատանքային կամ ամուսնաընտանեկան որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերը մեդիացիայի միջոցով լուծելու վերաբերյալ: Ընդ որում, կամավոր մեդիացիա իրականացնելու դեպքում հետագա գործողությունները որոշում են կողմերը:

[6] Տե՛ս ICC Rules, Art.30; Code of Civil Procedure of Germany, Art. 1055;Code of Civil Procedure of Austria, Art. 607 և Swiss Civil Procedure Code, Art. 387, որը սահմանում է, որ վճռի մասին տեղեկացվելուց հետո այն պարտադիր իրավական ուժ է ստանում և ենթակա է կատարման:

2015 թվականի մայիսի 7-ին մեդիացիան (հաշտարարությունը) օրենսդրական կարգավորում ստացավ ՀՀ քաղաքացիական դատավարության 22.3 գլխում և համապատասխանաբար ՀՀ ընտանեկան օրենսգրքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքում, ՀՀ դատական օրենսգրքում և այլն:

Միջազգային երկրների փորձն ուսումնասիրելով և համապատասխանեցնելով այն ՀՀ թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ իրավական դաշտին՝ մեդիացիան՝ որպես քաղաքացիաիրավական վեճերի լուծման արտադատական եղանակ, փորձ է արվում կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում, քանի որ գործնականում դրա անհրաժեշտությունն առկա է:

Գաղտնիք չէ, որ ՀՀ քաղաքացիական գործեր քննող դատարանները գերծանրաբեռնված են, ուստի մեդիացիան այս պարագայում հանդիսանում է ևս մեկ դրական միջոց որոշակի գործեր իրականացնելու համար: Սակայն օրենքի ընդունումից հետո չեն արձանագրվում մեդիացիոն գործողություններ, և կամ մեդիացիայի միջոցով քննված ու ավարտված գործեր: Առավել ևս, երբ Հայաստանի Հանրապետությունում ունենք արտոնագրված թվով 50 հաշտարարների ցուցակ:

Չինաստանում, ԱՄՆ-ում, վերջերս նաև Իտալիայում, Ռումինիայում գործում է պարտադիր (հարկադիր) մեդիացիա ինստիտուտը, որտեղ հիմնականում ամուսնաընտանեկան, ալիմենտային իրավահարաբերություններից բխող վեճերը հանձնվում են այդ մարմինների քննությանը՝ դատարաններին գերծանրաբեռնվածությունից բեռնաթափելու նպատակով: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ կարելի է Հայաստանում այն նույնպես օրենսդրորեն ամրագրել և իրականացնել հետևյալ կերպ. դատարանը, **դատաքննության նախապատրաստական փուլում կողմերի ցանկությունը հաշվի առնելով, պարտադիր կարգով համապատասխան գործը ուղարկի մեդիացիա իրականացնող որևէ մարմնի:** Վստահաբար կարծում եմ, որ արդյունավետ գործելաոճի արդյունքում և՛ հանրությունը տեղեկացված կլինի մեդիացիայի բուն գործընթացի և էության մասին, և՛ դատարանները մասնավորապես ամուսնաընտանեկան և ալիմենտային իրավահարաբերություններից բխող վեճերի դեպքում բեռնաթափված կլինեն:

Ընդգծենք, որ **հարկադիր մեդիացիա** (պարտադիր մեդիացիա) իրականացնելու դեպքում, եթե կողմերը ձեռք են բերում հաշտության համաձայնություն, ապա տեքստը գրավոր ձևակերպումով ներկայացնում են համապատասխան դատարան[7], որտեղ և հաստատվում է այն:

Քաղաքացիաիրավական վեճերի քննության այլընտրանքային եղանակների զարգացումները, այնուամենայնիվ, հիմնականում կախված են դատական ինստիտուտի զարգացած լինելուց, և եթե դատական ինստիտուտը երկրում պատշաճ մակարդակի չէ, երբևէ հնարավոր չէ ակնկալել պատշաճ զարգացվածության նմանատիպ ինստիտուտներ:

Այսպիսով, թե՛ արբիտրաժը և թե՛ մեդիացիան համապատասխանում է ՀՀ իրավական դաշտին, պարզապես անհրաժեշտ է պրակտիկայում արդյունավետ

[7] Եթե կողմերին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն է ուղղորդել մեդիացիա իրականացնող որևէ մարմնի կամ դատաքննության նախապատրաստական փուլում դատարանի կողմից առաջարկվել է, սակայն կողմերն իրենք են ընտրել արտոնագրված հաշտարարների ցուցակից որևէ հաշտարարի, ապա հաշտարարությամբ ավարտված վերջնական ակտը հաստատվում է նույն դատարանի կողմից: Իհարկե, կարող են ստեղծվել այնպիսի իրավիճակներ, երբ կողմերը հաշտությամբ չեն ցանկանում ավարտել վեճը և դիմում են նույն դատարանին՝ վերսկսելու կամ շարունակելու համապատասխան վեճը:

կիրառել, հետևողական լինել թե՛ Յունսիտրալի մոդելային օրենքի շարունակական փոփոխություններին ու զարգացմանը և թե՛ միջազգային երկրների փորձին ու անընդհատ փոփոխություններին և զարգացումներին: Անշուշտ, դա կբարձրացնի նաև օտարերկրյա տարրի վստահությունը՝ ՀՀ և արտասահմանյան իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև եղած վեճերը Հայաստանի Հանրապետության առևտրային արբիտրաժներին և մեդիացիա իրականացնող մարմիններին հանձնելու առումով:

Հիրավի, արդարադատությունն ընդհանրապես աստվածաշնչյան հիմունքներով կառուցելը հնարավորություն կտա ոչ միայն բարելավելու դրա որակը, այլև վերակենդանացնելու մեր ազգային ակունքներին, բարձրացնելու դատարանի[8], ինչպես նաև վեճերի լուծման այլընտրանքային եղանակների դերն ու նշանակությունը՝ հատկապես դատական իշխանությունը դարձնելու տեսանելի և ծանրակշիռ:

Օգտագործված գրականության ցանկ

ա) Օրենքներ և նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեով, Երևան, 2016թ. «Տիգրան Մեծ» հրատ. ՓԲԸ, 166 էջ:
2. «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» Յունսիտրալի մոդելային օրենքը (2006թ. փոփոխություններով) Կ-796-26.05.2015, 11.06.2015-ՊԻ-010/0: Լրամշակված տարբերակ, www.coe.am
3. «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք (2016թ. փոփոխություններով), www.parliament.am/legislation 07.07.2015թ; ՀՕ-76:
4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր N 4 (12) 2004, E87an, 935 էջ:
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2015թ. փոփոխություններով):
6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (2015թ. փոփոխություններով):
7. ICC Rules, Art.30; Code of Civil Procedure of Germany, Art. 1055;Code of Civil Procedure of Austria, Art. 607 և Swiss Civil Procedure Code, Art. 387, Uncitral Rules, Central and European Yearbook of Arbitration, 24. February 2014:

բ) Մասնագիտական գրականություն և հոդվածներ

1. Պետրոսյան Ռ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատ. (փոփոխություններով և լրացումներով), Երևան, 2012թ. «Ոսկան Երևանցի», 692 էջ:
2. Պետրոսյան Ռ., Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները, Երևան, 2008, «Ոսկան Երևանցի», 72 էջ:

[8] Տե՛ս Ռ. Պետրոսյան, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները, Երևան, 2008թ. էջ 51:

3. Չոբանյան Ա., Այլընտրանքային դատավարություն. Եվրոպական երկրների փորձը և Հայաստանի Հանրապետությունում դրա զարգացման միտումները //«Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, 2 (136), 2007, //«Իրավունք» հրատ. 27-30 էջեր:
4. Joseph F. Morrissey and Jack M. Graves. International Sales law and Arbitration, Kluwer Law International BV, Gary Born 1519-1520 pp.

Армине Чобанян
Преподаватель юридической кафедры Международного университета Евразия

АРБИТРАЖ И ПОСРЕДНИЧЕСТВО КАК АЛЬТЕРНАТИВНЫЙ МЕТОД РЕШЕНИЯ ГРАЖДАНСКИХ СПОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Статья посвящена альтернативным мерам по разрешению гражданско-процессуальных споров. В обобщенном виде представлены процессы коммерческого арбитража и медиации с их соответствующими процедурами. В статье также представлены обстоятельства обязательности или необязательности решений коммерческого арбитража и медиации.

Ключевые слова: обязательное посредничество, арбитражный процесс, международный арбитраж, добровольное посредничество, арбитражный суд, арбитражное соглашение.

Armine Chobanyan
Lecturer of the Law Department at Eurasia International University

ARBITRATION AND MEDIATION AS AN ALTERNATIVE WAYS OF SOLVING CIVIL LITIGATION IN THE RA

The article provides a comparative analysis of the similarities and differences between mediation and arbitration, and certainly given mandatory and not necessarily conditions and the application of mediation and arbitration decisions.

Key words: compulsory mediation, arbitration process, international arbitrage, voluntary mediation, arbitration court, arbitration agreement.